

ԹԻԼ 25978  
Օգոստոս 15, 1978

Մեծայարգ  
Տիար Պարզեւ Խոճաճեան  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ժխական Խորհուրդի Ատենապետ  
Թորոնթօ.

Յարգելի Տիար Խոճաճեան,

Թորոնթոյի մեր համայնքին մէջ երկրորդ ծուխի մը կազմութեան կապակցութեամբ հետեւեալ ծրագիրը կը ներկայացնենք ծրխական Խորհուրդիդ.

Առաջնորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-գանձապահ Հոգ. Տ. Յուսիկ Ե. Վրդ. Պաղտասեան Թորոնթօ պիտի գտնուի Երեքշաբթի Օգոստոս 29ին՝ այս հարցի մասին ժողով-տեսակցութիւն մը ունենալու հաջար ծխական Խորհուրդիդ եւ մի քանի այլ ազգայիններու հետ, որոնք մեր կողմէ պիտի հրաւիրուին յիշեալ ժողովին:

Ժողովի գլխաւոր օրակարգը պիտի ըլլայ ծրագրումը այն օրինական քայլերուն՝ որոնք պիտի առնուին Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հաւանութեամբ, Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխ մը հաստատելու առնչութեամբ:

Հաճեցէք այս մասին տեղեակ պահել ծխական Խորհուրդիդ անդամները եւ զանոնք հրաւիրել Երեքշաբթի Օգոստոս 29, երեկոյեան ժամը 8.00ին՝ Եկեղեցւոյդ սրահին մէջ զուարուելիք ժողովին:

Ազատ զգացէք մեզի հետ հաղորդակցելու՝ այս ժողովի մասին յաւելեալ մանրամասնութեանց կապակցութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ